ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գործի քննության հետ կապված այլ ծախսերն են՝ գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության գումարները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 9.4-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝ բազային տուրքի 50-ապատիկի չափով:

Տվյալ պարագայում, Հայցվորի կողմից օրենքով սահմանված կարգով վճարվել է իր կողմից ներկայացված պահանջի մասով պետական տուրքի գումարը, ուստի Դատարանը գտնում է, որ սույն վճռի պատճառաբանություններով հայցը մերժման ենթակա լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Այլ դատական ծախսեր սույն գործով չեն կատարվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով, 101-րդ, 105-րդ, 109-րդ, 168-րդ, 169-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «ԳՐԱՖԵՆ-ՇԻՆ» ՍՊ ընկերության հայցադիմումն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ ՀՀ ֆինանսաների նախարարություն՝ «ԳՐԱՖԵՆ-ՇԻՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Երևանի քաղաքապետի 23.09.2022թ. կայացրած թիվ 3369-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել՝ հայցային վաղեմություն կիրառելու հիմքով:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարկվելու պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **ԼԻԼԻԹ ՍԱՂՈՅԱՆ**